

Թոնի Ալամոյի
Քրիստոնեական
Եկեղեցի

Միջազգային Լրատու

Նոր Երուսաղեմ Եկեղեցիները Աշխարհասփյուռ

Քահանա Թոնի Ալամո

Ալամոյի Քրիստոնեական Ազգը

Համար 16900

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՈՒՐԱՆԱԼ ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՅՀՈՅԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Հեղինակ Թոնի Ալամո

Պատասխանն է ա՛յո: Եվ նրանք այնքան շատ անգամ են այդպես վարվել: Այն, ինչն այդքան անհավոր է Դանիելի գրքի յոթերորդ գլխի տասնիններորդ խոսքում (Արքա Հակոբի (Ջեյմսի) Աստվածաշունչը) նշված չորրորդ աշխարհիկ թագավորության մասին, այն հղումն է դեպի աշխարհիկ թագավորությանը, որում մենք հիմա ապրում ենք: Մենք հենց այդ ժամանակներում ենք, երբ բոլորը ստիպված կլինեն կամ ուրանալ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ կամ էլ չուրանալ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, ընդունել հրեշի նշանը և հնարավոր է նաև սպանված լինել:¹

Դանիելը, ԱՍՏՈՆ կողմից շատ բարձր գնահատված մարգարեն, աղոթեց ԱՍՏՈՆ, որպեսզի իմանա, թե որոնք են լինելու չորս թագավորությունները: ԱՍՏՎԱԾ ցույց տվեց նրան դրանք, և Դանիելը թվարկել է դրանք: Երբ ուսումնասիրում ենք Աստվածաշունչը և աշխարհի պատմությունը, մենք կարող ենք հեշտությամբ ապացուցել, որ Դանիելի հայտնությունը հիմնալի կերպով բացահայտել է այդ թագավորությունները, ինչպես նաև ԴԱՄՏԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՍՏՎԱԾ ցույց տվեց նրան դրանք:²

Մենք ապրում ենք չորրորդ և վերջին աշխարհիկ թագավորությունում, սատանայական վերջին աշխարհիկ թագավորությունում:³ Դուք միգուցե լսել եք սուտ մարգարեների մասին, որոնք ասում էին, որ աշխարհի վերջը շատ մոտ է՝ նշելով կոնկրետ ամսաթիվ: Ոչ ոք չգիտի աշխարհի վերջի ճշգրիտ ամսաթիվը:⁴ Մարգարեություններ կան, որոնք պետք է սկզբից գան և անցնեն: Դրանցից վերջիններից մեկը նշված էր Թեսաղոնիկեցիների երկրորդ գրքի երկրորդ գլխում, որ ԱՍՏՈՒՅՑ հեռանալու հոսք է լինելու: Դա հիմա տեղի է ունենում, բայց ոչ ոք չգիտի աշխարհի վերջի հստակ օրը: Երկրորդը այն է, որ մենք բախվելու ենք զազանի նշանը ընդունելու կամ չընդունելու խնդրի հետ (Յայտնություն գիրք 13:16-17): Այն բոլորին, ովքեր կընդունեն այդ նշանը, պետք է ասվի, որ դա նույնն է, ինչ հայտնվել ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, ինչը աններելի է ինչպես այս աշխարհում, այնպես էլ գալիք աշխարհում (Մաթեոս 12:31-32, Յայտնություն գիրք 14:9-11):



Թոնի և Սյուզան Ալամոն իրենց միջազգային հեռուստահաղորդման ժամանակ: Այն հեռարձակվում էր 1972-ից մինչև 1982 թթ, երբ Սյուզանը հեռացավ, որպեսզի լինի ԱՍՏՈՆ հետ:

Պրոֆ. Լուսցերը, մի քարոզիչ Չիկագոյի Մուդի Աստվածաշնչի ինստիտուտից, մի անգամ հարց ստացավ ռադիո հաղորդման ժամանակ իր ունկնդիրներից մեկից, ով հարցնում էր, արդյոք հնարավոր է Քրիստոնյայի համար հայտնիել ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ: Նա ըստ էության ասաց «Ոչ», ինչը սուտ է: Աստվածաշունչը պարզ ասում է, որ ՔՐԻՍՏՈՒՅՑ հեռանալու մեծ հոսք է լինելու (Բ Թեսաղոնիկեցիս 2: 3-4):

«Դուք իսկոյն չառվուէք ձեր մտքում եւ չգարհուրէք ո՛չ հոգով, ո՛չ խօսքով, ո՛չ էլ թղթերով իբր թէ մեր կողմից գրուած [սրիկաները] կեղծում էին տառերը, ասելով թէ դրանք Պողոս Առաքյալից են», որպէս թէ արդէն եկած հասած լինի Տիրոջ օրը: Թող ոչ ոք ձեզ չխաբի եւ ոչ մի ձեւով. որովհետեւ այն օրը չի գալու, եթէ նախ ապստամբութիւնը չգայ, եւ յայտնուի անօրէնութեան մարդը՝ կորստեան որդին » (Բ Թեսաղոնիկեցիս 2:2,3): Կործանման որդին մարդկության մեծ մարմինն է, միլիոնավոր հայտնողների հավաքական մարմինը, որից և կազմվում է Հակաքրիստոսի մարմինը:

Շատ Քրիստոնեաների ՔՐԻՍՏՈՒՅՑ հեռանալու պատճառը կատաղի եւ անեղ ատելությունն է, որ խավարի ուժերը ունեն դեպի ԱՍՏՎԱԾ, ՆՐԱ ԽՈՍՔԸ որը ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ է,⁵ և նրանց հանդեպ, ովքեր քարոզում են ՆՐԱ ԽՈՍՔԸ,⁶ և քանի որ նրանք տարվում են այս ներկա աշխարհի հոգսերով, այնտեղի վավաշոտ ցանկություններով:⁷ Կրկին, ԻՐ նախկին տաճարների վերջին խումբը:⁸

(Շարունակությունը՝ էջ 2)

1 Յու. Գլուխ 13, 14:9-11, 15:1-2, 19:20, 20:4 2 Դն. 2:16-45, Գլուխ 7 3 Դն. 2:40, 7:19-25, 8:8-12, 16-26, 12:1, Յու. 13:2-8, Գլուխ 17 4 Մտ. 24:36-51, Մկ. 13:32-37 5 Յն. 1:1, 14, Ս Յն 1:1-3, Յյու. 19:13 6 Դն. 7:7, 17-25, Ա Պտ. 5:8, Յյու. 11:3-7, 12:1-4, 9-17, 13:1-10, 17:11-14, 19:19 7 Մր. 4:18-19, Ա Յն. 2:15-17 8 Ա Կրնթ. 8 3:16-17, 6:15-20, Եթ. 2:19-22

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՈՒՐԱՆԱԼ ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՅՀՈՅԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

(Շարունակությունը 1 էջից)

Այն ժամանակաշրջանը, որում մենք ապրում ենք հիմա, ըստ էության հենց չորրորդ սատանայական, աշխարհիկ թագավորությունն է, որը շատ է տարբերվում նախորդ երեք թագավորություններից: Այն շատ ավելի դևական է:⁹ Դանիելի գրքի յոթերորդ գլխում հրեշտակն ասաց Դանիելին, որ այդ մեծ պատկերը խորհրդանշում էր աշխարհի չորս թագավորությունները (Դանիել 7:17): Չորս թագավորություններ են, որոնք կառաջանային աշխարհի վրա: «Ապա ԲԱՐՁՐԵԱԼ ԱՍՏՈՆ սրբերը պիտի ելնեն եւ առնեն թագաւորութիւնը [որը հինգերորդ թագավորությունն է, Դրախտի հավիտենական Թագավորությունը] եւ պահեն այն յաւիտեանս յաւիտենից» (Դանիել 7:18): ԱՍՏՈՆ սրբերը պետք է հիշեն, որ ԱՍՏՎԱԾ չի ստում և հիշեն, որ մեզ, սրբերիս խոսք է տրված դրախտային թագավորությունը և դատավճիռը (Տիտուս 1:2):¹⁰ Սա մենք պետք է հիշենք, կամ էլ մենք էլ կհեռանանք չորրորդ հրեշի հետապնդումների ժամանակ, ով ամեն օր կառուցում է իր ատելությունն ԱՍՏՈՆ, ՆՐԱ ԽՈՍՔԻ և ՆՐԱ մարդկանց դեմ: Ահա մի քանի օրինակ. (1) Աստվածաշունչը պատժվում է աշխարհում, (2) ԱՍՏՈՆ կամ ՆՐԱ պատվիրանների հիշատակումը համարվում է հանցագործություն, ամաչեցնող և ոչ քաղաքակիրթ, (3) համասեռամոլությունը խրախուսվում է, ինչը ԱՍՏՎԱԾ ատում և դատապարտում է,¹¹ և հանցագործություն է համարվում ատելության հիմքով նույնիսկ դրա մասին հիշատակելը, իսկ ամուսնությունը, որը երբեմն մեկ տղամարդու և երկու ու ավելի

կնոջ միջև է դատապարտվում է աշխարհի մարդկանց կողմից: Սա Աստվածաշնչի ճշմարտությունն է, ԱՍՏՈՆ ԽՈՍՔԸ,¹² (4) հարյուրավոր չնվաճ երեխաներ դաժանորեն սպանվում են, վեց հարյուր միլիոն միայն Չինաստանում և մեկ միլիոն ԱՄՆ-ում, չհաշված այլ երկրները, (5) պոռնկությունը և շուտությունը խրախուսվում են կառավարության և աշխարհի լրատվամիջոցների կողմից, (6) կաթոլիկ հանրակրթական դպրոցներում նախապատանեկան տարիքի երեխաներին սովորեցնում են տղամարդկանց և կանանց համասեռամոլության, սպանության, թմրանյութերի մասին և ուրիշների ծնողների նկատմամբ անհնազանդություն, և (7) Գերագույն դատարանը որոշել է, որ ստելը նորմալ է:¹³

Մեզանից նրանք, ովքեր այդ անաստված մեղքերի մասին հակառակն են սովորեցնում, համարվում են ատելություն սերմանողներ, և ուղարկվում են բանտեր սուտ մեղադրանքներով այն բանի համար, որ բոլորին սովորեցնում են, թե ԱՍՏՎԱԾ ինչ է ասել նրանց, ովքեր նման մեղքեր են գործում և հայիտում են ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ: Այս դաժանությունները գալիս են հենց Սատանայից, որը գործում է պետական կառույցների միջոցով, որոնք ներառում են աշխարհիկ դպրոցները և լրատվամիջոցները:

Դանիել 7:7-ում աստված է. «Դրանից յետոյ դարձեալ նայում էի. եւ ահա տեսայ չորրորդ գազանին, որ ահեղ, զարմանալի եւ առաւել հզօր էր. նրա ժանիքները երկաթեայ էին, [շոունը միշտ ճանաչված է եղել որպես Երկաթյա Մենապետություն]: ուտում-մանրում էր եւ ժաւցորդները ոտքի տակ կոտրատում: [Այնպես, ինչպես որ այսօրվա կառավարությունն է անում] Սա աւելի այլակերպ էր, [տարբեր] քան նրանից առաջ բոլոր գազանները [կառավարությունները] [որովհետև նրանք ամբողջությամբ սատանայական են] տասը եղջիր ունէր [տաս Եվրոպական ազգերը] »:

Ես գիտեմ, որ չորս հրեշների տեսականը իրական է, քանի որ ես, նույնիսկ ես, ունեցել եմ նույն երազ տեսիլքը չորս հրեշների մասին: Երազի այդ մասը խորհրդանշում է այսօրվա մեկ աշխարհի կառավարությունը, որը պատրաստվում է ստիպել բոլոր հայիտողներին աշխարհում իրենց աջ ձեռքին կամ ճակատին դնել իր նշանը (միգուցե մի միկրոչիպ): Եթե դնեք այս նշանը, այս հնարավոր միկրոչիպը, ապա դուք նույնն եք, ինչ բոլոր ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ հայիտողները, ԱՍՏՈՆ կողմից դատապարտված, բայց դուք ի վիճակի կլինեք նպարեղեն և գազ գնել ու կկարողանաք վճարել ձեր տան և մեքենայի համար ծախսերը: Եթե չդնեք այդ նշանը, այդ չիպը, դուք չեք կարողանա ո՛չ գնել, ո՛չ վաճառել: Ավելի շատ մարդիկ կհեռանան ԱՍՏՈՆի՞Յ այս պատճառով: Բնչկիցե, եթե հեռանաք ԱՍՏՈՆի՞Յ՝ այդ նշանը դնելով, կրկին հայիտյա՞ծ կլինեք ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, և չի լինի ձեզ ներում դրա համար ո՛չ այս աշխարհում, ո՛չ էլ գալիք աշխարհում (Մաթեոս 12:31-32, Յայտնություն գիրք 14:9-11):

Յայտնություն գրքի 13:12-ում ասված է. «Եւ նա [սատանեական կառավարությունը] առաջին գազանի ամբողջ իշխանութիւնն էր ի գործ դնում նրա առաջ եւ ստիպում էր, որ երկիրն ու նրա բոլոր բնակիչները երկրպագեն առաջին գազանին, [կրկին, սա դևի կողմից կառավարվող Հռոմն է], մինչեւ որ առողջանայ նրա մահացու վերքը»: Յայտնություն 14:9-10-ում ասված է. «Եւ մի երրորդ հրեշտակ գալիս էր նրանց յետեւից եւ բարձր ձայնով ասում. «Ով որ [ներառյալ Քրիստոնյա] երկրպագեց գազանին ու նրա արձանին [ծառայեց աշխարհիկ կառավարությանը] եւ կամ նրա նշանի դրոշմն առաւ իր ճակատին կամ իր աջ ձեռքի վրայ, այդպիսին պիտի խմի ԱՍՏՈՆ ցասման բաժակից, որ անխառն լցուած է ՆՐԱ բարկութեան բաժակի մեջ, եւ նա պիտի տանջուի, հրով եւ ծծմբով, ԱՍՏՈՆ ու ԳԱՌԱՆ [ՀԻՍՈՒՍ] առաջ»: Դուք կարող եք ասել, որ Հին Կտակարանի ԱՍՏՎԱԾ ցասումների ԱՍՏՎԱԾ է, բայց ՆԱ նույնն է եղել երեկ, այսօր և ընդմիշտ (Եբրայացիներ 13:8): Նա նույնն է Նոր Կտակարանում: Նա սիրո ԱՍՏՎԱԾ է, բայց Նոր Կտակարանում ՆԱ նաև զայրացած է չմեղանչող մեղավորների վրա:¹⁴

Յայտնություն 19:20-ում ՀԻՍՈՒՍԸ ասում է. «Եւ բռնուեց գազանը [աշխարհի կառավարությունը և նրանք, ովքեր կապված են դրա հետ] ու նրա հետ եղող սուտ մարգարէն, [սուտ կրոնները և այդպես կոչված եկեղեցիները և մարգարեները, որ կառավարվում են Հռոմի կողմից՝ Սատանայի միջոցով], որ նրա առաջ նշաններ էր գործում. դրանցով մոլորեցնում էր նրանց, որոնց ստիպել էր առնել գազանի դրոշմը եւ [ամբողջ աշխարհը, որ փրկված չէ] երկրպագուներ էր դարձրել իր արձանին [որ դնն է]: Եւ նրանց կենդանի գցեցին ծծմբով այրուող Կրակէ Լճի մէջ»:

Ահա թե ինչու ՏԵՐԸ «գազան» է անվանում սա: Այս կառավարությունը տարբերվում է ժաւցածներից. Ահեղ և ահալոր, անչափ հզոր, որն ունի «երկաթյա ատամներ», և այն լավում է և մասերի ջարդում, իր ոտքերի հետքերն է դաջում, և այն տարբեր է բոլոր հրեշավոր աշխարհի թագավորություններից, որոնք դրանից առաջ էին (Դանիել 7:7, 16-19): Դրանից առաջ երեք թագավորությունները որոշ չափով գովերգում էին ԱՍՏՈՆ, բայց ԱՍՏՎԱԾ ատում է այսօրվա թագավորությունը, քանի որ այն հայիտում է ԱՍՏՈՆ, ՆՐԱ ԽՈՍՔԸ, դրախտի մարդկանց և երկրի վրա ԱՍՏՈՆ սրբերին:¹⁵

Սատանան կանի ամեն ինչ, ինչ իր ուժի մեջ է, որպեսզի ստիպի ձեզ հայիտել ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ, որովհետև նա ուզում է, որ Դժոխքում և Կրակէ Լճում իր հետ անվերջություն անցկացնեք: Հիսուսը պատվիրել է մեզ գնահատել այն գինը, որը մենք կվճարենք ՆՐԱՆ

(Շարունակությունը՝ էջ 2)

9 Դն. 2:40, 7:7-8, 19-25, Յյու. 12:3-4, 12-17, Գլուխ 13, 14:8- 11, 16:1-7, Գլ.-ներ 17, 18, 19:1-3 10 Դն. 2:44-45, 7:13-14, 18, 22, 27, Եբր. 12:28, Յյու. 16:1-11, Chapter 17, 18:1-11, 20:1-4, 11-15, 21:1-8, 22:12-14 11 Օն. 19:1-13, 24-25, Դւ. 18:22, 20:13, Բ Օր. 22:5, 23:17-18, Դւ. 19:22-28, Ա. Թգ. 1 14:24, 15:11-12, Հն. 1:18-32, Ա. Կրկն. 6:9-10, Ա. Տմ. 1:9-10, Բ. Տմ. 3:1-5, Յդ. 7 12 Ելք. 21:10, Օր. 21:15-17, 25:5-6, Դւ. 8:30, 12:8-9, 13-14, Բ. Սամ. 3:2-5, 5:13-16, 12:7-8, Եւ. 4:1, Մտ. 5:17, Ա Տմ. 4:1-3, Եբր. 13:4 13 Հուլիսը մեղեդին ծովվել (Hustler Magazine v. Falwel,) 485 U.S. 46 (1988) 14 Մտ. 3:1-12, Յհ. 3:35-36, Գրծ. 5:1-11, Հն. 1:18-32, 2:3-11, Կդ. 3:5-6, Ա Պտ. 4:17-18, Յյու. 2:18-23, 6:12-17, 11:16-18, 19:11-21 15 Դն. 7:7, 19

ԹԻՖԻՆԻ ԿՈՇԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սա իմ անձնական վկայությունն է Տեր Հիսուս Քրիստոսի Ուժով պահելու և պահպանելու մասին:

Իմ մանկության ընթացքում ինձ երբեք իսկապես չեն սովորեցրել Հիսուսի և Նրա Խոսքի մասին: Միակ բանը, որ ես հիշում եմ, այն սարսափելի վախն էր Դժոխքում ԸՆԴՄԻՇՏ վառվելու նկատմամբ և գիտակցությունը, որ այդ ԸՆԴՄԻՇՏ երբեք չի վերջանա: Դա ինձ համար այնքան իրական էր, որ ես կարող եմ եզրակացնել, որ Աստված Ինքը բացեց իմ հասկացողությունը սա իմանալու համար: Դա սարսափեցնում էր ինձ, բայց մեծանալուն պես, այդ վախը խամրեց այս աշխարհի հոգսերի հայտնվելուն պես: Ոչ մի հիմք չունենալով, որը կառաջնորդեր ինձ, ես խորապես ընկղմվեցի մեղքի մեջ: Ես կարող եմ ազնվորեն ասել, որ ոչ մի մեղքի աստիճան երբեք հաճելի չի եղել ինձ համար: Ես ատում էի այդ ամենը: Հիշում եմ շատ անգամներ, երբ փորձում էի ցնցուղ ընդունելիս մաքրել այդ կեղտոտ ճանապարհի հետքը վրայիցս, բայց երբեք ինձ մաքուր չէի զգում: Դա տեղի չէր ունենում, քանի որ կեղտը իմ հոգում էր: Ես գերի էի ընկել մեղքին, չգիտեի ինչպես դադարեցնել, և հայտնվել էի բանտում՝ առանց գրավի: Ահա հենց այդտեղ էլ սկսեցի կարդալ Աստծո Սուրբ Խոսքը: Սերմը արդեն տնկվում էր. Աստված իսկապես սկսել էր ինձ հետ աշխատել: Երբ ազատվեցի, փորձեցի կանգնել և իմ սեփական ուժով փորձեցի հաղթահարել մեղքը, որի նկատմամբ դեռ կախվածություն ունեի, սակայն շարունակում էի հետ ընկնել իմ հին կյանքի ուղիների վրա: Ոչ ոք չէր պատմում ինձ, որ պետք է նորից ծնվեի և մաքրվեի Հիսուսի արյունով: Շատ տարբեր եկեղեցիներ գնալուց հետո և դրանցից որևէ մեկում պատասխաններ չստանալուց հետո, նրանք ասացին ինձ. «Օ՛հ, Աստված գիտի, որ դու թույլ ես: Ամեն ինչ լավ կլինի: Պարզապես արա այն ամենը, ինչ քո ուժերի մեջ է»: Բայց ես ատում էի իմ կյանքը: Այն թույլ ու խեղճ էր, և ես գիտեի, որ եթե կա Աստված, որը ստեղծել է երկիրը և երկինքը վեց օրվա ընթացքում, ուրե՛մն դա թույլ Աստված չէ: Այդ դեպքում ի՞նչու է ընդունելի, որ իր ստեղծածը լինի թույլ: Դա անիմաստ էր թվում ինձ, և Աստված գիտեր, որ ես կասկածում էի այս առումով: Եւ ի՞նչ պատահեց այս վառվող կրակին, որ երբեք չի վերջանում, որը ես ընկալել էի դեռևս մանուկ հասակում:

Որոնումը դեռ ապրում էր իմ սրտում, բայց շուրջ բոլորս մահ էր: Ես նորից ընկա մեղքի մեջ, այս անգամ դա կոկաինն էր, որի պատճառով կորցրեցի ամեն ինչ: Երեխաներիս վերցրեցին ինձանից: Մենք վաճառեցինք մեր ողջ կահույքը կոկաին գնելու համար: Մենք չունեինք ոչ ուտելիք, ոչ էլեկտրաէներգիա: Ձմռան սառը ամիսներին քնում էինք գետնին: Վերջապես ես հասա մի ամեն ինչից հոգնած և զզված լինելու մի կետի, երբ արդեն հոգնել էի



լինել հոգնած և զզված, և սկսեցի ԱՍՏՈՆ աղաղակել և լացել այն ամենի մասին, ինչ որ ունեի իմ մեջ: Ինչ որ պատճառով

խոհանոցում դրված էր Աստվածաշունչ բացված Եսայի գրքի 52-րդ գլխի առաջին խոսքի էջին: Ես կարդացի. « Զարթնի՛ր, զարթնի՛ր, Սիոն, հագի՛ր քո զորութիւնը, Սիոն. դու էլ քո փառքը հագիր, ո՛վ սուրբ քաղաքդ Երուսաղեմ, որովհետեւ պիղծերն ու անթլփատներն այլեւս չեն անցնելու քո միջով»:

Ես գիտեի, որ Աստված լսել է իմ օգնության ճիչը: Ես գիտեի, որ Ամենակարող Աստված խոսում էր հենց ինձ հետ: Սա թույլ Աստվածը չէր, որի մասին խոսում էին այսպես կոչված եկեղեցիները: Սա ամեն ինչ իմացող, ամենակարող և հզոր Աստված էր, որը հրամայում էր անել որևէ բան: Եւ ես պատասխանեցի

նրան և ուզեցի, որ Նա ցույց տա ինձ, թե ինչպես դա անել. «Ինչպե՛ս պիտի անեմ դա, Աստված »:

Մոտ երկու շաբաթ անց ես գտա Մեր քահանա Թոնի Ալամոյի ավետարանչական գրականությունը: Այդ ժամանակ շատ քիչ էի հասկանում, որ դա իմ հարցի պատասխանն էր: Ինձ պետք էր հասկանալ, թե որքան ուժեղ ես կարող եմ լինել Աստծո մեջ: Կարդացի գրականության ետևի մասը, այնտեղ ասված էր. Թոնի Ալամոյի Քրիստոնեական Առաքելությունը տրամադրում է կացարան բոլոր անհրաժեշտ պարագաներով նրանց համար, ովքեր իսկապես ուզում են ծառայել ԱՍՏՈՆ իրենց ամբողջ սրտով, մտքով, և ուժով: Այո, դա ես էի: Փառք ԱՍՏՈՆ: Իմ ընտանիքը և ես տեղափոխվեցինք: Մենք արդեն ինը տարի է եկեղեցու անդամ ենք, և այդ եկեղեցին ինձ սովորեցրել է ինձ ազատ լինել մեղքից՝ համաձայն ԱՍՏՈՆ Խոսքին, դու ՊԵՏՔ է վերածնվես Սուրբ Հոգով և մաքրվես Հիսուսի արյունով, և ապա դու ՊԵՏՔ է ամեն օր կրես քո խաչը, հրաժարվես քեզանից, և հետևես Տեր Հիսուսին՝ կարդալով, աղոթելով, և Տիրոջ հրամանները կատարելով: Հիմա սա է ուժը: Հիմա ես քայլում եմ հաղթական, ուժով լի կյանքով իմ Տեր Հիսուս Քրիստոսի հետ, որ առաջնորդում է ինձ դեպի Դրախտի Թագավորություն: Այլևս ոչ մի մահ: Ես հիմա քայլում եմ կյանքում: Իմ երեխաները գիտեն ԱՍՏՈՆ Խոսքը: Նրանք սիրում են Տիրոջը, և դա չեն սովորեցնում հանրակրթական դպրոցներում կամ էլ եկեղեցիներում, որոնք ես երբևէ հաճախել եմ: Ես այնքան շնորհակալ եմ ԱՍՏՈՆԻՑ և իմ Քահանայից, Թոնի Ալամոյից և նրա վաղամեծիկ կնոջից՝ Սյուզիից, որոնք իրենց կյանքն են դրել ավելի քան հիսուն տարի առաջ և հիմնել են այս եկեղեցին, որպեսզի ուրիշներն էլ կարողանան իրենց կյանքը տալ ԱՍՏՈՆԻՆ և կենտրոնանան ԱՍՏՈՆ ծառայելու և ավետարանը քարոզելու վրա՝ աշխարհի կորուսյալներին և մահացած հոգիներով մարդկանց:

Օրհնեալ է Տերը,
Թիֆինի Կոշան

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՈՒՐԱՆԱԼ ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՅՀՈՅԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

(Շարունակությունը 1 էջից)

ծառայելու համար, որպեսզի մենք կարողանանք որոշել, արդյոք այնքան շատ ենք ուզում ընկնել Դրախտ, որ վճարենք այդ գինը (Դուկաս 14:26-33): Դրա համար պետք է վճարել ինչ-որ գին: Հիսուսը ասաց, որ ԻՐ համար դա ԻՐ ԿՅԱՆՔԸ արժեցավ: ՀԻՍՈՒՍԸ նաև ասել է. «Ի՛նչ օգուտ կունենայ մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի (Մաթեոս 16:25):

«Մի՛ սիրեք աշխարհը, ոչ էլ՝ ինչ որ աշխարհի մեջ կայ: Եթե մեկը սիրում է աշխարհը, Հօր սերը նրա մեջ չէ, քանի որ այն ամենը, ինչ աշխարհի մեջ կայ, մարմնի ցանկությունն է, աչքերի ցանկությունն է և այս կեանքի ամբարտաւանությունն, որ Հօրից չէ, այլ այս աշխարհից: Թե՛ այս աշխարհն է անցնում, թե՛ ցանկությունը: Իսկ ով կատարում է ԱՍՏՈՆ կամքը, մնում է յաւիտեան» (Ա. Նովիանենս 2:15-17)¹⁷

Մարդու ամբողջ պարտականությունը ԱՍՏՈՒՑ վախենալն է և հետևել ՆՐԱ պատվիրաններին մինչև վերջ (Ժողովող 12:13-14): Նրանք, ովքեր կշարունակեն մինչև վերջ, կփրկվեն (Մաթեոս 24:13): Սկսեք հիմա: Խուսափեք Դժոխքից և Հրեղեն Լճից՝ այս աղոթքը ասելով:

Իմ ՏԵՐ, իմ ԱՍՏՎԱԾ, մեղքերիս քավություն եմ խնդրում հոգուս համար, ես, մեղսավորս:¹⁸ **Հավատում եմ, որ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ապրող ԱՍՏՈՆ ՈՐԴԻՆ է:**¹⁹ **Հավատում եմ, որ ՆԱ մահացավ խաչի վրա և ԻՐ անգին արյունը թափեց իմ գործած բոլոր մեղքերի քավության համար:**²⁰ **Հավատում եմ, որ ԱՍՏՎԱԾ իր ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՐ ուժի շնորհիվ կյանքի բերեց ՀԻՍՈՒՍԻՆ:**²¹ **և որ ՀԻՍՈՒՍԸ նստում է ԱՍՏՈՆ աջ կողմում և այս պահին լսում է իմ մեղքերի խոստովանությունը և այս աղոթքը:**²² **ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, ես իմ սրտի դուռը բացում եմ և հրավիրում եմ ՔԵԶ իմ սրտի մեջ:**²³ **Մաքրիր իմ բոլոր մեղքերը ՔՈ անգին արյունով, որ ԴՈՒ թափեցիր խաչի վրա իմ փոխարեն Գողգոթայում:**²⁴ **ԴՈՒ չես հեռացնի ինձ, ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, ԴՈՒ կներես իմ մեղքերը և կփրկես իմ հոգին: Ես**

գիտեմ, որովհետև ՔՈ ԽՈՍՔԸ, Աստվածաշունչն է այդպես ասում:²⁵ **ԱՍՏՈՆ ԽՈՍՔՆ** ասում է, որ ԴՈՒ ոչ ոքից երես չես թեքի, այդ թվում և ինձնից:²⁶ **Հետևաբար, ես գիտեմ, որ ԴՈՒ լսել ես ինձ, և ԴՈՒ պատասխանել ես ինձ, և ես գիտեմ, որ փրկված եմ:**²⁷ **Ես շնորհակալ եմ ՔԵԶԱՆԻՑ, ՏԵՐ ՀԻՍՈՒՍ, իմ հոգին փրկելու համար, և ես ցույց կտամ իմ շնորհակալությունը՝ հետևելով ՔՈ հրամաններին և այլևս մեղք չգործելով:**²⁸

Փրկությունից հետո, ՀԻՍՈՒՍԸ պատվիրեց մկրտություն անցնել, ամբողջովին ընկղմվել ջրի մեջ հանուն ՀՈՐ, և ՈՐԴՎՈ և ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՐ:²⁹ Պետք է ջանասիրաբար ուսումնասիրել ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ (Հին և Նոր կտակարանների) Եբրայերեն և հունարեն բնօրինակների թարգմանությունը և անել այն ամենը, ինչ այնտեղ ասված է մինչև քո վերջին օրը:³⁰

ԱՍՏՎԱԾ ուզում է, որ դու պատմես քո փրկության մասին մյուսներին: Դու կարող ես դառնալ Քահանա Թոնի Ալամոյի Ավետարանական գրականության տարածողը: Մենք անվճար կուղարկենք քեզ այդ գրականությունը: Ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար զանգահարեք կամ էլեկտրոնային նամակ ուղարկեք մեզ: Եվ տարածեք այդ ուղերձները:

Եթե ուզում եք, որ աշխարհը փրկվի, ինչպես ՀԻՍՈՒՍԸ է պատվիրում, ապա մի կողոպտեք ԱՍՏՈՒՆ, ԻՐ տասանորդները: Աստված ասում է. «Մի՛ թե մարդը կկողոպտի ԱՍՏՈՒՆ. Իսկ դուք կողոպտում եք ԻՆՁ: Բայց դուք ասում եք. «ՔԵԶԱՆԻՑ ի՛նչ ենք գողացել: Տասանորդներն ու նվիրաբերությունները: Անեծքով անիծված եք, քանի որ կողոպտում եք ԻՆՁ, ամբողջ ազգը և [նույնիսկ ամբողջ աշխարհը]: Բոլոր տասանորդները [համախառն եկամուտի 10%-ը] ամբար բերեք, որպեսզի ՏԱՆՍ [փրկված հոգիները] մեջ ուտելիք լինի [հոգևոր ուտելիք] և ապացուցեք ԻՆՁ այդպես, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Եթե չբացեմ Դրախտի պատուհանները ձեզ համար և օրհնություն չթափեմ ձեզ վրա, ուրեմն դուք վայր չեք ունենա դրանք ստանալու համար: Հանուն ձեզ կհանդիմանեմ ժառա հասցնողին, որ նա այլևս չավերի ձեր պտուղը, և ձեր այգու որթատունկը անպտուղ չի լինի, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ: Բոլոր ազգերը երանի կտան ձեզ և դուք ցանկալի երկիր կդառնաք, ասում է ՏԵՐԵՐԻ ՏԵՐԸ» (Մաղաքիա 3:8-12):

16 Մտ. 27:27-50, Եբր. 10:9-14, Ա.Յհ. 3:16, 4:10 17 Գղ. 1:3-4, Եփ. 2:1-7, Կղ. 2:8, Տիմ. 2:11-14, Յղ 4:1-10, Բ. Պտ. 1:2-4, Ա. Յհ 5:4-5 18 Սղ 51:5, Հռ 3:10-12, 23 19 Մտ 26:63-64, 27:54, Դկ 1:30-33, Յհ 9:35-37, Հռ 1:3-4 20 Գրծ 4:12, 20:28, Հռ 3:25, Ա.Յհ 1:7, Յյտ 5:9 21 Սղ 16:9-10, Մտ 28:5-7, Սրկ 16:9, 12, 14, Յհ 2:19, 21, 10:17-18, 11:25, Գրծ 2:24, 3:15, Հռ 8:11, Ա.Կրկն 15:3-7 22 Դկ 22:69, Գրծ 2:25-36, Եբր 10:12-13 23 Ա.Կր 3:16, Յյտ 3:20 24 Եփ 2:13-22, Եբր 9:22, 13:12, 20-21, Ա.Յհ. 1:7, Յյտ 1:5, 7:14 25 Մտ 26:28, Գրծ 2:21, 4:12, Եփ 1:7, Կղ 1:14 26 Մտ 21:22, Յհ 6:35, 37-40, Հռ 10:13 27 Եբր 11:6 28 Յհ 5:14, 8:11, Հռ 6:4, Ա.Կր 15:10, Յյտ 7:14, 22:14 29 Մտ 28:18-20, Յհ 3:5, Գրծ 2:38, 19:3-5 30 Բ.Օր 4:29, 13:4, 26:16, Ես 1:8, 22:5, Բ.Տվ 2:15, 3:14-17, Յղ 1:22-25, Յյտ 3:18

Խնդրում ենք, կապվեք մեզ հետ հավելյալ տեղեկատվություն և այլ հետաքրքրող թեմաների համար:

Tony Alamo, World Pastor, Tony Alamo Christian Ministries Worldwide • P.O. Box 2948, Hollywood, CA 90078

Քասնչորսմայա հեռարձակում և տեղեկատվական թեժ գիծ: (661) 252-5686 • Fax (661) 252-4362

www.alamoministries.com • info@alamoministries.com

Թոնի Ալամո, Համաշխարհային Քահանա, Թոնի Ալամոյի Քրիստոնեական Առաքելությունը ԱՄՆում բնակվողների համար տրամադրում է բոլոր հարմարություններով կացարաններ, այն բոլորի համար, ովքեր իրենց ամբողջ սրտով, հոգով, մտքով և ուժով ուզում են ծառայել ԱՍՏՈՒՆ:

Նյու-Յորքում ծառայությունները անց են կցվում ամեն Երեքշաբթի ժամը 20:00-ին, իսկ այլ բնակավայրերում ամեն գիշեր:

ՅՈՒՐԱՔԱՆՉՈՒՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՑ ՀԵՏՈ ԿԱՐՈՂ ԵՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀՅՈՒՐԱՄԻՐՈՒԹՅԱՆ:

Խնդրում ենք զանգահարել (908) 937-5723 համարով տեղեկատվության համար:

Կարող եք ստանալ Քահանա Ալամոյի գիրքը, Մեսիան, որտեղ ներկայացվում են 333 մարգարեություններ ՔՐԻՍՏՈՍԻ մասին, որ հայտնաբերվել են Հին Կտակարանում:

Տարածեք Քահանա Ալամոյի գրականությունը և դարձեք բանվոր հոգիների բերքի հավաքման գործում:

Մեր ողջ գրականությունը և աուդիոքարոզներն անվճար են, ներառյալ փոխադրումը:

Եթե որևէ մեկը փորձի ձեզնից վճար պահանջել դրանց համար, խնդրում ենք զանգահարել անվճար այս համարի հաշվին տվյալ հեռախոսահամարով (661) 252-5686

ԱՅՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՓՐԿՈՒԹՅԱՆ ՃԵՄԱՐԻՑ ԾՐԱԳԻՐԸ (Գրծ 4:12):

ԴԵՆ ՄԻ ՆԵՏԵՔ ԱՅՆ ՓՈԽԱՐԵԼԸ ՓՈԽԱՆՑԵՔ ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ

Նրանց, ովքեր գտնվում են այլ երկրներում, մենք քաջալերում են թարգմանել այս գրականությունը ձեր մայրենի լեզվով: Գրականությունը վերատպելու դեպքում, խնդրում ենք ներառել հետևյալ հեղինակային իրավունքը և գրանցումը:

© Հեղ. Իրավունք. նոյեմբեր 2012 • Բոլոր իրավունքները պաշտպանված են Աշխարհի Քահանա Թոնի Ալամոյ © Գրանցված է Նոյեմբեր 2012

ARMENIAN—Vol. 16900—Can Christians Fall Away and Blaspheme The Holy Spirit?